«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ժողովրդական բանահյուսությունը որպես կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության միջոց
ԱՌԱՐԿԱ	Դասվար
ՀԵՂԻՆԱԿ	Քրիստինե Մեջլումյան
ՄԱՐԶ	Կոտայք
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Հրազդանի թիվ 2 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……...3

Գլուխ 1. Ժողովրդական բանահյուսության դերը աճող սերնդի ուսուցման, դաստիարակության գործընթացում……..…… 27

Գլուխ 2. Ժողովրդական բանահյուսության դերը կրտսեր դպրոցականների բարոյական դաստիարակության գործընթացում…… 38

Եզրակացություն……...……. 48

Օգտագործած գրականության ցանկ…….……... 51

Հավելված

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերն էլ այսօր արդիական են և կարևոր. երեխաները ծննդյան առաջին իսկ օրերից լսում են օրորոցային երգեր, քնում, արթնանում և դաստիարակվում են դրանց ներքո, ծանոթանում են ժողովրդական խաղիկներին, ծնողները նրանց համար կարդում են հեքիաթներ, ավելի մեծ տարիքում երեխաներն արտասանում են հանելուկներ, շուտասելուկներ, կարդում են խնդուկներ, անեկդոտներ, այնուհետև՝ առակներ, ասացվածքներ և առածներ, վիպերգեր և այլն: Այլ կերպ ասած՝ տարիքի աճին զուգընթաց երեխաները ծանոթանում են ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերին: Ժողովրդական բանահյուսությունն ուղեկցում է մեզ մեր ամբողջ կյանքի ընթացքում:

Այսօր մեր առօրյան լի է օտարամոլությամբ. հեռուստացույցով ցուցադրում են արտասահմանյան ֆիլմեր, մուլտֆիլմեր, ամենուր հնչում է օտար երաժշտություն: Այս ամենը նպաստում է մատաղ սերնդի՝ ազգային արժեքներից հեռանալուն: Եվ որպեսզի աճող սերունդը չտարվի օտարամոլությամբ, օգնության է հասնում ժողովրդական բանահյուսությունը՝ վերադարձնելով մեզ ազգային արմատներին, սովորույթներին, բարքերին: Այն բարոյական դաստիարակության և, ընդհանրապես, հայեցի դաստիարակության լավագույն և անփոխարինելի միջոց է: Ժողովրդական բանահյուսությունը եղել է, կա և շարունակում է մնալ բարոյական դաստիարակության ձևավորման լավագույն միջոց:

Բարոյական որակների ձևավորման գործում մեծ դեր է խաղում գրականությունը: Հայ և օտարազգի մանկավարժների կարծիքով կարելի է տարբեր տարիքային խմբերի սովորողների մեջ ձևավորել մի շարք բարոյական որակներ: Այդ են վկայում Նատալյա Յակովլևնա Մեշչերյակովայի «Սովորողների բարոյական դաստիարակությունը գականության դասերին 4-5-րդ դասարաններում» գիրքը, որտեղ Գոգոլի, Չեխովի, Ֆադեևի, Շոլոխովի և այլոց ստեղծագործությունների միջոցով իրականացվում է բարոյական որակների ձևավորումը:

Ժողովրդական բանահյուսության դաստիարակչական դերը կարևորել են նաև Օ. Ղարիբջանյանը «Ժողովրդական ավանդույթները դպրոցականների բարոյական դաստիարակության գործոններ» աշխատությունում:

Հետազոտության առարկան: Սովորողների բարոյական դաստիարակության իրականացման ուղիներն ու ճանապարհներն են՝ ժողովրդական բանահյուսության միջոցով:

Հետազոտության օբյեկտը: Ժողովրդական բանահյուսության՝ որպես բարոյական դաստիարակության միջոցի ուսումնասիրումն է:

Հետազոտության նպատակները: Հիմնավորել ժողովրդական բանահյուսության նպատակայնությունն ու կարևորությունը կրտսեր դպրոցականների բարոյական դաստիարակության գործընթացում:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել և կարևորել ժողովրդական բանահյուսության դերը աճող սերնդի ուսուցման, դաստիարակության գործընթացում:
2. Լուսաբանել, վերլուծել և հիմնավորել ժողովրդական բանահյուսության դերը կրտսեր դպրոցականների բարոյական դաստիարակության գործընթացում:

Հետազոտության մեթոդները: Աշխատանքը ներկայացնելու համար իրականացրել եմ նպատակային էքսկուրսիաներ դեպի ժողովրդական արվեստի կենտրոններ (Մաչանենց տուն, <<Մամիկ>> հյուրատուն), պատմամշակութային վայրեր, գրադարաններ, պատրաստել ենք պաստառներ և ներկայացրել, կիրառել եմ դիտման, զրույցի, խմբային աշխատանքների մեթոդները: Հետազոտական մասը անցկացրել եմ կրտսեր դպրոցական տարիքի տարբեր աշակերտների շրջանում:

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԱՃՈՂ ՍԵՐՆԴԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ, ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բանահյուսությունը ժողովրդի բանավոր ստեղծագործությունն է, նրա կոլեկտիվ բանականության և կոլեկտիվ հույզի արգասիքը: Սկիզբ առնելով անհիշելի ժամանակներից՝ այն, հուսանոտ գետի պես, անընդհատ նորոգվել է, դֆեսդթարմացել, իր մեջ առնելով ժողովրդական լայն զանգվածների աշխարհընկալումը, դարավոր կենսափորձը, նրանց ըմբռնումներն ու իմաստնությունը:

Բանահյուսությունը կյանք է առել ոչ թե իշխանական դղյակներում՝ «պալատական ասացողների կողմից», այլ ֆեոդալական ներքնախավերում, գյուղական անշուք խրճիթներում՝ հողի աշխատավորի կողմից: «Նրա ստեղծողը ժողովուրդն է,- ասում է Գորկին,- ժամանակով առաջին փիլիսոփան ու պոետը, որն ստեղծել է բոլոր մեծ պոեմները, համաշխարհային կուլտուրայի պատմությունը»:

Հին հայկական բանահյուսությունը առանձնանում է նաև իր ժանրային հարստությամբ. հեթանոսական Հայաստանում վիպական ժանրի տեսակները բաղկացած են եղել զրույցներից, առասպելներից, կենդանական վեպից, պատմական- վիպական երգերից և թվելյաց երգերից, իսկ լիրիկական ժանրի մեջ մտել են գուսանական երգերը, պարերգերը, հարսանեկան երգերը և եղերգերը: Դրամատիկական ժանրից հիշատակվում է միայն երգ ցցուցը:

Մեծ է ժողովրդական բանահյուսության դերը աճող սերնդի դաստիարակության գործընթացում:

Անհիշելի ժամանակներից հայ ժողովուրդը ստեղծել է բանահյուսության կատարյալ նմուշներ՝ հեքիաթներ, առասպելներ, առակներ, զրույցներ, հանելուկներ, շուտասելուկներ, առածներ, ասացվածքներ, վիպերգեր, լիրիկական երգեր, որոնք էական նշանակություն են ունեցել երեխաների բարոյական դաստիարակության ասպարեզում:

Պատահական չէ, որ դրանք արժանացել են հայ նշանավոր մտավորականների բարձր գնահատականներին: Այսպես, Ղ. Աղայանը դրանք համարել է ոչ միայն հայեցի դաստիարակության, այլև երեխայի լեզվի մարզման և ազգային մտածողության կերտման միջոց:

Այժմ քննարկենք ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը առանձին-առանձին՝ քննելով այն հարցը, թե ինչ դեր ունեն դրանք աճող սերնդի դաստիարակության գործընթացում:

Այսպես, հեքիաթն ունի մեծ դաստիարակչական արժեք և հզոր ներգործող ուժ: Քննարկենք, օրինակ, Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթը, որը ժողովրդական հեքիաթի վերամշակում է: Այն իր բնույթով հրաշապատում-հերոսական հեքիաթ է, որտեղ կա բարու և չարի բաժանում, իսկ վերջում, իհարկե, հաղթում է բարին:Այս հեքիաթը վերլուծենք հեքիաթաթերապիայի միջոցով: Իսկ ի՞նչ է հեքիաթաթերապիան: Լայն առումով այն բուժում է հեքիաթներով, իսկ նեղ առումով այն կապ է հաստատում հեքիաթի բովանդակության և իրականության միջև: Երեխայի համար պարզ է դառնում, թե հեքիաթային տվյալ իրավիճակը ինչպես կարելի է իրագործել կյանքում: Հեքիաթը բացահայտվում է այլ տեսակետներից, որոնք մինչ այդ երեխային պարզ չեն:

Հեքիաթաթերապիայի կարևոր խնդիրներից մեկն այն է, թե ինչպես երեխային կմատուցվի հեքիաթը, պետք է ստեղծել այնպիսի տրամադրություն, որ երեխան լսի հեքիաթը: Դրա համար կարելի է կատարել հետևյալ վարժությունը. երեխաները նստում են շրջանաձև՝ ավելի մտերմիկ միջավայր ստեղծելու նպատակով, ուսուցիչը տալիս է խթանող հարց, որը երեխաների ուշադրությունը կկենտրոնացնի տվյալ խնդրի շուրջ, և ուսուցիչը սկսում է պատմել հեքիաթը: Ստեղծվում է միասնական տրամադրություն: Հեքիաթը պատմել վերջացնելուց հետո ուսուցչի կողմից տրվում են հարցեր, որոնք բացահայտում են հեքիաթի հիմնական միտքը: Կարևոր է հասկանալ հեքիաթի հիմնական գաղափարը, այսինքն, ի՞նչ էին ուզում մեզ ասել մեր նախնիները, ինչի՞ մասին զգուշացրեցին, ի՞նչ փորձ փոխանցեցին: Այդ կապակցությամբ տրվում են այսպիսի բովանդակությամբ հարցեր.

- ինչի՞ մասին է այս հեքիաթը,
- ի՞նչ է նա մեզ սովորեցնում,
- ո՞ր իրավիճակում կարող ենք օգտագործել հեքիաթից ստացած փորձը:

Տվյալ դեպքում մեր քննարկման առարկան «Անահիտ» հեքիաթն է: Այս հեքիաթն այն մասին է, թե ինչպես կարելի է իմաստության, շրջահայացության և արհեստի միջոցով դուրս գալ պրոբլեմային իրավիճակից:

Ինչպես հեքիաթում է նշվում՝ «Թագավորի կյանքը արհեստն է փրկել». սա է հենց հեքիաթի հիմնական գաղափարը: Հեքիաթը սովորեցնում է, որ յուրաքանչյուր մարդ՝ լինի աղքատ թե հարուստ, գիտուն թե անգետ, գյուղացի թե քաղաքացի, թագավոր թե ծառա, պետք է արհեստ իմանա, քանի որ կյանքն աստիճան է, այսօրվա ծառաների տերը վաղը կարող է ինքը լինել ծառա: Հենց այդ արհեստը Վաչագանին փրկեց կործանումից: Ինչպես ասում են՝ արհեստ իմացող մարդը կյանքում չի կորչի:

Նմանատիպ հարցերի պատասխանների միջոցով երեխաները ձեռք են բերում բարոյական արժեքներ:

Այսպիսի ընդհանուր հարցերին պատասխանելուց հետո ուսուցիչը աշակերտների միջոցով փորձում է վերլուծել գլխավոր հերոսների վարքը.

- ինչպե՞ս է հերոսը լուծում պրոբլեմը:
- լուծման և վարքի ո՞ր միջոցն է նախընտրում:
- ի՞նքն է բոլոր հարցերը լուծում, թե՞ հույսը դրել է մեկ ուրիշի վրա:
- մեր կյանքում ո՞ր միջոցն է առավել օգտակար, արդյունավետ, որ իմացանք հեքիաթից:

Տվյալ դեպքում մեր հեքիաթի գլխավոր հերոսները երկուսն են՝ Անահիտն ու Վաչագանը: Նրանցից յուրաքանչյուրը իր առջև ծառացած պրոբլեմը լուծում է տարբեր միջոցներով. Անահիտն իր թշնամու վրա հարձակվում է ուղիղ, առանց այլևայլության, առանց խորամանկության և կախարդական առարկաների օգնության, իսկ Վաչագանը պրոբլեմային իրավիճակից դուրս գալու համար դիմում է խորամանկության:

Եթե Անահիտն իր բոլոր հարցերը նախընտրում է լուծել միայնակ, առանց որևէ մեկի օգնության, ապա Վաչագանը հույսը դնում է մեկ ուրիշի վրա՝ այս դեպքում կնոջ վրա:

Հեքիաթաթերապիայի միջոցով բացահայտվում է այս հարցերի հոգեբանական կողմը: Այսպես, ուղիղ հարձակման դեպքում հարցին լուծում ես տալիս ուժի տեսանկյունից, թշնամուն ցույց ես տալիս ֆիզիկական և մտավոր ուժդ, իսկ խորամանկման դեպքում իրավիճակին նայում ես մյուս կողմից, մեկ այլ

տեսանկյունից: Եթե հարցը փորձում ես լուծել միայնակ, ուրեմն վստահ ես քո ուժերի և հնարավորությունների վրա, իսկ եթե հույսդ դնում ես մեկ ուրիշի վրա, ուրեմն գիտակցում ես, որ որոշ իրավիճակներում հնարավոր չէ միայնակ գործել և սկսում ես մտածել, թե ով կարող է օգնել:

Աշակերտն ունենալով լուծումների այսպիսի ցուցակ՝ կարևոր է ճիշտ իմանալ, թե կյանքի որ իրավիճակում որ միջոցից օգտվել, օրինակ՝ ուղիղ հարձակվել թշնամու վրա, թե՝ խորամանկել, դիմել ուրիշի օգնությանը, թե՝ ոչ: Այս հարցում ևս ուսուցիչը պետք է ուղղորդի աշակերտներին ճիշտ ընտրել այս կամ այն միջոցը կյանքի տարբեր իրավիճակներում:

Հեքիաթի վերլուծության հաջորդ փուլում պետք է կապ հաստատել հեքիաթի և իրականության միջև: Այստեղ գիտակցում ենք, որ յուրաքանչյուր հեքիաթային իրավիճակ մեզ տալիս է կյանքի փորձ: Մեր խնդիրն է համբերատար մշակել հեքիաթային իրավիճակները, թե ինչպես կարելի է օգտագործել ստացած փորձը, գիտելիքները կյանքում: Ուսուցիչը քննարկում է երեխաների հետ, թե որ իրավիճակներում նրանք կարող են օգտվել նոր ձեռք բերած փորձից:

Տվյալ դեպքում մեր ընտրած հեքիաթն ունի մեծ ուսուցողական և դաստիարակչական նշանակություն և շատ բան է սովորեցնում երեխաներին: Աղջիկները, որպեսզի նմանվեն Անահիտին, պետք է լինեն խելացի, շնորհալի, իմաստուն, հյուրասեր, համարձակ, քաջ, խիզախ և միևնույն ժամանակ փափկասիրտ, համեստ, ազնիվ և հեռատես: Իսկ տղաները ձգտում են նմանվել Վաչագանին, լինել նրա նման բարի, իմաստուն, շրջահայաց, համարձակ և ազնիվ:

Այս բարոյական բարձր հատկանիշներին զուգահեռ հեքիաթում կարևորվում են նաև ուսման և արհեստի գաղափարները: Հեքիաթի հիմնական գաղափարը ամփոփված է հետևյալ նախադասության մեջ. «Ուսումն ու արհեստը պետք է այնպես հյուսված լինեն միասին, ինչպես Վաչագան թագավորի դիպակը իր խորհրդավոր թալիսմաններով»:

Ուսուցիչը երեխաներին բացատրում է, որ կյանքում ևս կարող են լինել այնպիսի իրավիճակներ, որտեղ մեզ փրկի արհեստը, դրա համար մեզանից յուրաքանչյուրը պետք է իմանա որևէ արհեստ և անպայման լինի գրագետ: Արհեստն ու ուսումն են, որ միշտ մնայուն են, այդ երկուսից և ոչ մեկը մեզանից չեն կարող խլել, իսկ ոսկին, արծաթը, հարստությունը և այլևայլ կոչումները անցողիկ են, այսօր

կարող են լինել, իսկ վաղը՝ չլինել: Իսկ գիտելիքն ամեն պարագայում մեզ օգնում է և դուրս բերում տհաճ իրավիճակից:

Այս ամենից հետո ուսուցիչն ամփոփում է նոր ստացած գիտելիքները, կապում է այն անցած հեքիաթների հետ, աշակերտների օգնությամբ գտնում նմանություններ և տարբերություններ, ամրապնդում է նոր փորձը, պատրաստում է երեխաներին սովորական կյանքին:

Հեքիաթից «դուրս գալու» համար ուսուցիչն ասում է. «Մենք վերցնում ենք մեզ հետ ամենակարևորը, ինչ այսօր սովորեցինք»: Երեխաները պարզում են ձեռքերը իրենց դիմաց, կարծես մի բան են վերցնում շրջանից, և դնում են իրենց կրծքին:

Այսպիսով, այս հեքիաթից երեխաները պետք է վերցնեն այն, որ յուրաքանչյուր անձնավորություն պետք է տիրապետի որևէ արհեստի և լինի խելացի, քանի որ ամենաանսպասելի պահին կարող է քեզ փրկել միայն ու միայն արհեստը, գիտելիքն ու խելքը:

Ահա մոտավորապես այսպիսի սխեմայով է իրականացվում հեքիաթի վերլուծությունը հեքիաթաթերապիայի միջոցով: Հեքիաթաթերապիայի կիրառումը դպրոցական դասընթացում շատ կարևոր է, այն, անկասկած, դրականորեն կանրադառնա ուսումնական պրոցեսի վրա:

Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերը, որոնք երեխայի մեջ ձևավորում են բարոյական որակներ, առասպելները, զրույցներն ու ավանդապատումներն են: Դրանցից մի քանիսը մեզ հասել են տարբեր հեղինակների կողմից վերամշակված տարբերակներով:

«Տորք Անգեղ» առասպելը մեզ է հասել Ղ. Աղայանի վերամշակմամբ, իսկ «Վահագնի ծնունդը»՝ Հովհ. Հովհաննիսյանի մշակմամբ, «Թմկաբերդի առումը» զրույցը՝ Հովհ. Թումանյանի մշակմամբ, «Հայոց լեռներ» ավանդապատումն էլ՝ Պ.Սևակի մշակմաբ:

Աճող սերնդի ուսուցման և դաստիարակության գործում իրենց անփոխարինելի դերն ունեն վիպերգերը, որոնցից դպրոցական ծրագրերում զետեղված են «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Արտավազդ» վիպերգերը:

Այդ վիպերգերի միջոցով երեխաները սովորում են, որ պետք է լինել մարդասեր, ժողովրդասեր, հայրենասեր, ազատասեր, ինչպես Հայկ Նահապետը, շիտակ, ազնիվ, համարձակ և հերոսական, ինչպես Տիգրան Մեծը, բարի, արդար և

խաղաղասեր, ինչպես Արտաշեսը, և չպետք է լինել Բելի պես վախկոտ, սնապարծ, ամբարտավան ու բռնակալ, Արտավազդի պես չար, նախանձ, կործանարար, Աժդահակի պես նենգ, խորամանկ, խարդախ, կեղծավոր:

Պետք է դաստիարակչական աշխատանքն այնպես կազմակերպել,որ երեխաները գիտակցեն, թե ինչու չպետք է նմանվել բացասական կերպարներին, իրենց բնավորության մեջ որ գիծը պետք է զարգացնել և որ գիծը՝ վերացնել:

Դաստիարակչական և ուսուցողական մեծ արժեք ունեն առակները: Առակն այլաբանական բնույթի գեղարվեստական փոքրածավալ ստեղծագործություն է, որի նպատակն է՝ բնական և կենդանի իմացությունը մղել դեպի բարոյական սկզբունքների ճանաչում: Բոլոր առակներն անխտիր ունեն բարոյախրատական բովանդակություն, դրա համար էլ հնում առակների ժողովածուները կրում էին «Խոսք իմաստնոց», «Պատմություն օգտակարք», «Խրատք գեղեցկության» վերնագրերը:

Հայ ժողովրդական և հեղինակային առակներում անխտիր դատապարտվել են մարդկային արատներն ու բացասական որակները՝ ծուլությունը («Անմատչելի լեռը»), վախկոտությունը, հիմարությունը («Առյուծն ու մարդը»), չարախոսությունը («Առյուծը, աղվեսն ու արջը»):

Առակների մի մասում բարոյախրատական հատվածը տված է վերջում, իսկ մյուս մասն էլ այդպիսի եզրակացություն չի պարունակում, ընթերցողն ինքը պետք է կռահի առակի ենթատեքստը:

Աճող սերնդի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում էական դեր կարող են խաղալ նաև ասացվածքներն ու առածները:

Ասացվածքը ժողովրդական բանահյուսության փիլիսոփայական ժանրի ստեղծագործություն է, որը հակիրճ ու դիպուկ խոսքով բնորոշում է կյանքի որևէ երևույթ: Ասացվածքը միտքն արտահայտում է ուղղակի՝ առանց միջնորդավորման: Այն առանձնապես կարևոր դեր ունի դաստիարակչական տեսանկյունից: Այսպես, օրինակ, պարապմունքի ժամանակ անզուսպ, շատախոս երեխաներին նախատելու համար, առանց նրանց ինքնասիրությունը վիրավորելու կարելի է օգտագործել հետևյալ ասացվածքները.

Մեկ խոսիր՝ տասը լսիր:

Խոսելը լավ է, լռելն՝ ավելի:

Ավելի շատ օգտվիր ականջներից, քան լեզվից:

Փակ բերանը ճանճ չի մտնի:

Ընտանիքում հարկավոր է վաղ տարիքից երեխաներին սովորեցնել աշխատել, սիրել ու գնահատել աշխատանքը, կատարել մեծերի հանձնարարությունները, հասկանալ, որ աշխատանքի միջոցով կարելի է հասնել ցանկալի արդյունքի: Այդ տեսակետից հաճախ պետք է օգտատործել հետևյալ ասացվածքները.

Աշխատանքը առաքինությունների աղբյուր է:

Քրտինքն աշխատանքի արցունքն է:

Այսօրվա գործը վաղվան մի թողնի:

Ով աշխատի՝ նա կուտի:

Առածը խրատական բնույթ ունեցեղ իմաստալից և հակիրճ խոսք է, որն արտահայտում է ժողովրդական հարուստ կենսափորձը: Առածները երեխաների կողմից ավելի դժվար են ընկալվում, քան ասացվածքները: Դրանք միտքն արտահայտում են անուղղակի ձևով՝ բնությունից վերցված օրինակների միջնորդությամբ: Օրինակ՝ Անուշ լեզուն մեղրից քաղցր է- նկատի ունի, որ լավ, գրագետ, բարի խոսքը ավելի լավ է, քան շատ այլ միջոցներ: Սա կարելի է փոխարինել մեկ այլ առածով՝ Քաղցր լեզուն օձը բնից կհանի, կամ այլ ասացվածքով՝ Խոսք կա՝ սարից ներքև կբերի, խոսք կա՝ սարի գլուխը կհանի:

Առանց ընկեր մենավոր ծառ ես, ընկերներով՝ անտառ - ենթատեքստն այն է, որ մարդը ուժեղ է բարեկամներով, ընկերներով, հարազատներով:

Եթե ընկեր չունես՝ միայնակ ես այս աշխարհում: Սրան համարժեք է հետևյալ առածը. Հավքը թևով կթռչի, մարդը՝ բարեկամով:

Ամփոփելով այս ամենը, կարող ենք ասել,որ փոքր տարիքում հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերին ծանոթացումը երեխաների մեջ ձևավորում է ազգային մշակույթ, վարք ու բարք և բարոյական հատուկ հատկանիշների հիմքեր: Դրանով էլ ստեղծվում է դաստիարակչական գործունեության մի յուրօրինակ ուղեցույց:

ԳԼՈՒԽ 2. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Դաստիարակությունը ավագ սերունդների կողմից նոր սերունդներին հասարակական-պատմական փորձի փոխանցման գործընթացն է՝ նրանց կյանքին ու աշխատանքին նախապատրաստելու նպատակով, որն անհրաժեշտ է հասարակության հետագա զարգացումն ապահովելու համար: Դաստիարակությունը այնպիսի հասարակական կատեգորիա է, առանց որի անիմաստ է հասարակության կյանքը, նրա առաջընթաց զարգացումը:

Դաստիարակության նպատակը կատարյալ մարդու ձևավորում է, նրա համակողմանի ու ներդաշնակ զարգացումը: Համակողմանի ու ներդաշնակ մարդ կարող է համարվել նա, ով տիրապետում է գիտությունների հիմունքներին, ունի գիտական գիտելիքների մեծ պաշար, ձևավորված գիտական մեծ աշխարհայացք, մտավոր, բարոյական, աշխատանքային, գեղագիտական, ֆիզիկական, իրավական, տնտեսագիտական դաստիարակվածություն և զարգացում, որոնք բոլորը բանական մարդու մեջ պետք է հանդես գան ոչ թե անջատ-անջատ բաղադրամասեր, այլ իրար շաղկապված, փոխկապակցված:

Դաստիարակության ընդհանուր համակարգի ամենակարևոր բաղադրամասերից մեկը բարոյական դաստիարակությունն է: Սա հասարակական գիտակցության այն ոլորտներից է, որը կյանքի բոլոր բնագավառներում մարդկանց վարքը կարգավորելու գործառնություն է կատարում:

Բարոյական դաստիարակությունը սերտորեն կապված է դաստիարակության մյուս բաղադրամասերի հետ և մեծ դեր է խաղում անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացման համար: Նրա հիմնական էությունը անձի բարոյական դաստիարակությունն ու բարոյական զարգացումն է: Այս երկու հասկացությունները փոխկապակցված են և ունեն նույն իմաստը: Եթե մարդն ունի բարոյական դաստիարակվածություն, ապա դա նշանակում է, որ նաև բարոյապես զարգացած է, և հակառակը: Այդ հասկացությունները ոչ միայն փոխկապակցված են ու փոխմիասնական, այլ նաև փոխկապված են, այսինքն՝ բարոյական զարգացումը կախում ունի բարոյական դաստիարակվածությունից, իսկ վերջինս էլ՝ բարոյական զարգացումից:

Բարոյական դաստիարակության նպատակը անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Մարդու բարոյական զարգացումը շարունակվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում: Այն չընդատվող գործընթաց է: Բարոյական զարգացմանը նպաստում են ուրիշ մարդկանց, հասարակության հետ անձի շփումները, հաղորդակցումները, որոնք անառարկելիորեն ներգործում են նրա գործողությունների, արարքների վրա, ձևավորում նրա անձը:

Բարոյական դաստիարակություն իրականացնողները հասարակական երեք օղակներն են՝ ընտանիքը, դպրոցը, եկեղեցին:

Ընտանիքն այն առաջնային միջավայրն է, որտեղ ձևավորվում են անհատի բարոյական հայացքներն ու պատկերացումները:

Մեծ է նաև եկեղեցու դերը միասնական բարոյահոգևոր միջավայրի ստեղծման հարցում:

Դպրոցը կանգնում է դժվարին խնդրի առաջ, քանի որ այստեղ են հավաքվում տարբեր աշխարհայացքային տիպերի ընտանիքների երեխաներ և ուսուցիչներ: Դրա համար կրթության մեջ անհրաժեշտ է մեկ միասնական բարոյահոգևոր դաստիարակության համակարգ, որը կհեշտացնի տարբեր աշխարհընկալման տեր անձանց երկխոսությունը:

Այս երեք օղակների միասնության արդյունքուն են ձևավորվում բարոյական բարձր որակներ: Բարոյական զարգացում ունեցող մարդը կոռեկտ է, պարկեշտ, առաքինի, բարեկիրթ: Այսպիսի մարդու նիստն ու կացը, գործողություններն ու արարքները, մարդկանց հետ հարաբերությունները, ամեն ինչի նկատմամբ վերաբերմունքը յուրահատուկ են և օրինակելի: Համագործակցության դեպքում է միայն հնարավոր ձևավորել բազմակողմանիորեն և բարոյապես ձևավորված մարդ:

Բարոյական այս բոլոր հատկանիշները և էլի մի շարք հատկանիշներ կրտսեր դպրոցում ձևավորվում են նաև ժողովրդական բանահյուսության միջոցով, որի գրեթե բոլոր ժանրերը ընդգրկված են տարրական դասարանների դասագրքերում:

Սկսած 1-ին դասարանից երեխաները ծանոթանում են ժողովրդական բանահյուսության մի շարք ժանրերի՝ հեքիաթ, առակ, վիպերգ, հանելուկ, ասացվածք, առած և այլն: Իսկ երգեցողություն առարկայի միջոցով երեխաները ծանոթանում են լիրիկական ստեղծագործություններին, ինչպիսիք են պարերգերը, օրորոցային

երգերը, հաշվերգերը, վիճակի երգերը, հարսանեկան երգերը, պանդխտի և աշխատանքային երգերը:

Տարրական դասարանների դասագրքերում շատ են ընդգրկված հատկապես պարերգերը և օրորոցային երգերը:

Երգեցողության դասագրքերում որոշակի բաժին հատկացված է նաև աշխատանքային երգերին, որն այլ կերպ կոչվում է գեղջկական երգ:Այդ երգերից են հորովելները, կալի և քաղհանի երգերը: Դրանցում գովերգվում է աշխատանքը կամ աշխատանքային որևէ պրոցես: Սա էլ հենց այս երգերի դաստիարակչական արժեքն է, քանի որ աշխատանքն է ընկած ամեն ինչի հիմքում: Գովերգվում է նաև աշխատավոր մարդը՝ երեխային հորդորելով նմանվել նրան, գնահատել աշխատանքը և երբեք չարհամարել աշխատավոր մարդուն:

Դասագրքերում անտեսված չեն նաև ծիսական երգերը, դրանք նվիրված են ժողովրդական ավանդույթներին, արարողություններին: Դրանք են հարսանեկան երգերը, տարբեր ծեսերին ու տոնախմբություններին՝ Համբարձմանը, Վարդավառին, Բարեկենդանին, Զատիկին, Սուրբ ծնունդին, Տեառն ընդառաջին, նվիրված երգերը:

Մեծ է այս երգերի ճանաչողական և դաստիարակչական արժեքը: Նախ և առաջ ծիսական երգերի միջոցով երեխաները ծանոթանում են մեր ազգային ծեսերին, ավանդույթներին, տեղեկություններ են ստանում այդ տոների կատարման ծիսակարգի մասին: Այնուհետև երեխաները դաստիարակվում են քրիստոնեական և ազգային ավանդույթների պահպանման ոգով:

Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերին երեխաները ծանոթանում են մայրենի լեզվի դասագրքերի միջոցով: Դասագրքերում մեծ տեղ է հատկացված հեքիաթներին, առակներին, առած-ասացվածքներին, հանելուկներին, ինչպես նաև մեր էպոսին՝ «Սասունցի Դավթին»:

Տարրական բոլոր դասարանների դասագրքերում էլ զետեղված են հեքիաթներ, որոնցից մի մասը ժողովրդական են, իսկ մյուս մասը՝ այս կամ այն հեղինակի կողմից գրված կամ մշակված:

Հեքիաթն, ընդհանրապես, ունի մեծ ներգործական ուժ, այդ իսկ պատճառով հեքիաթի միջոցով դաստիարակչական աշխատանք տանելը իր դրական արդյունքը կունենա, մանավանդ, եթե այն ուղեկցվի հեքիաթաթերապիայով:

Տարբեր հեղինակների կողմից կազմած դասագրքերում տարբեր կերպ են բաշխվել ժողովրդական հեքիաթները. մի դասագրքում ավելի շատ են

օգտագործվել, մյուսում՝ ավելի քիչ: Այժմյան գործող դասագրքերից մեկում (Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ.Խաչատրյան, 2-րդ դասարան) մեծ տեղ է հատկացված ժողովրդական հեքիաթներին և ժողովրդական զրույցներին, դրանց զուգահեռ զետեղված են նաև բազմաթիվ առածներ, ասացվածքներ, հանելուկներ: Դրանցից յուրաքանչյուրը որևէ բարոյական որակ է ձևավորում, ինչպիսիք են, օրինակ, աշխատասիրությունը(«Հարուստն ու հովիվը»), ընկերասիրությունը, համեստությունը, մեծահոգությունը, անձնազոհությունը, մեծի նկատմամբ հարգանքը, ազնվությունը, համարձակությունը, բարությունը, հավատարմությունը («Ո՞ր մեկս կամաչի»), և դատապարտում է ագահությունը, ժլատությունը, ծուլությունը («Աստված անողին է պարտական»), («Մեղուն ու հավը»), ստախոսությունը («Սուտասանը»), վախկոտությունը:

Ինձ հատկապես շատ է դուր եկել 2-րդ դասարանի դասագրքում ընդգրկված «Ո՞ր մեկս կամաչի» ժողովրդական զրույցը: Կարծում եմ, որ այն շատ տեղին է օգտագործված: Այն դաստիարակում է նախ և առաջ մարդասիրություն, հետո նոր ընկերասիրություն, մեծահոգություն, անձնազոհություն: Որպես այս հեքիաթի ամփոփում կարելի է օգտագործել հետևյալ առածներն ու ասացվածքները. «Լավություն արա, ջուրը գցի», «Լավ անես՝ քեզ անես, վատ անես՝ քեզ անես», «Լավ ընկերը նեղության ժամանակ է երևում»:

Միայն 2-րդ դասարանի դասագրքում ընդգրկված են վեց ժողովրդական հեքիաթներ և զրույցներ, բազմաթիվ առածներ, ասացվածքներ և հանելուկներ, որոնք, կարծես, յուրաքանչյուր դասի յուրօրինակ ամփոփում են: 3-րդ դասարանի դասագրքում զետեղված են 7 ժողովրդական և հեղինակային առակներ, բազմաթիվ առածներ, ասացվածքներ և հանելուկներ:

Առակներից մեկը ցույց է տալիս, թե ինչպես մարդը կարող է հնարամտությամբ և խորամանկությամբ փրկել դրությունը և իրավիճակից դուրս գալ հաղթանակած («Հնարամիտը»՝ Եզոպոս):

Մյուս առակը հորդորում է չլինել պարծենկոտ, այլ լինել համեստ, քանի որ համեստությունը զարդարում է մարդուն («Երկու աքլոր»):

Մեկ այլ առակում էլ գովերգվում է խելքն ու իմաստությունը, քանի որ դա է մնայունը, կայունը, ոչ ոք չի կարող խելքդ խլել քեզանից, իսկ հարստությունը, ունեցվածքը, ոսկին ու արծաթը կարող են զավթել, թալանել («Երեք հարուստ»):

Իսկ, օրինակ, Աթ. Խնկոյանի «Խոզն ու ագռավը» առակում դատապարտվում է երախտամոռությունն ու ապերախտությունը: Առակում խոզը խորհրդանշում է այնպիսի մարդկանց, որոնք մոռանում են ուրիշի արած լավությունը և այն փոխհատուցում են վատությամբ:

Շատ ողջունելի է այն փաստը, որ մեր դասագրքերի հեղինակներն անդրադարձել են նաև ժողովրդական բանահյուսության մեկ այլ ժանրին՝ անեկդոտին՝ դասագրքերում ընդգրկելով դրանցից մի քանիսը: Սա շատ կարևոր է, քանի որ աշակերտները դրանց միջոցով սովորում են վայելուչ կատակել, հումորով, ժպիտով և ծիծաղով վերաբերվել ընկերների կատակներին:

Հզոր դաստիարակչական ուժ ունի նաև հայ ազգային էպոսը՝ «Սասնա ծռերը»: Այն զետեղված է 1-4-րդ դասարանների բոլոր դասագրքերում, և ժողովրդական բանահյուսության այն միակ ժանրն է, որն օգտագործվել է դասագրքերի տարբեր հեղինակների կողմից: Բոլոր դասարանների դասագրքերում էլ ընդգրկված են «Սասունցի Դավիթ» վիպերգից հատվածներ: Դասարանից դասարան դրանց ծավալը շատանում է: Այդ բոլոր հատվածների հիմքում էլ ընկած է Ս. Դավթի և Մ. Մելիքի հակամարտությունը և բոլորն էլ վերջանում է Դավթի հաղթանակով:

Որպեսզի էպոսը ունենա իր դրական ազդեցությունը երեխաների վրա, պետք է այդ ուղղությամբ տանել ճիշտ դաստիարակչական աշխատանք: Երեխաների համար պետք է պարզ լինի, թե որոնք են Սասունցի Դավթի բնավորության լավագույն գծերը, թե նա իր այդ ո՞ր հատկանիշներով է սիրելի դարձել ժողովրդին, իսկ Մելիքը ինչու՞ է դարձել բոլորի կողմից ատելի: Այս հարցերի պարզաբանումով էլ երեխաների համար պարզ կլինի, թե իրենք ու՞մը պետք է նմանվեն, ու՞մ անձնային դրական որակները պետք է դարձնեն իրենցը: Դրա համար պետք է համեմատական զուգահեռներ անցկացնել էպոսի գլխավոր հերոսների միջև: Դրանում մեզ կօգնի Վեննի դիագրաման: Նայելով այս գծապատկերին՝ երեխաները պարզորոշ կերպով տեսնում են, թե ինչպիսին է Դավիթը և ինչպիսին է Մելիքը:



Բոլոր երեխաներն էլ ուզում են նմանվել Դավիթին. այս հանգամանքը օգտագործելով՝ ուսուցիչը ասում է, որ եթե երեխաներն ուզում են նմանվել Դավիթին, պետք է լինեն հայրենասեր, քաջ, ազնիվ, արդար, բարի, համարձակ և այլն: Իսկ եթե երեխաները չեն ուզում նմանվել Մելիքին, պետք է չլինեն չար, դաժան, անխիղճ, վախկոտ, այլապես իրենք վաղ թե ուշ կնմանվեն Մելիքին, և ոչ ոք նրանց չի սիրի:

Ինչպես «Սասունցի Դավիթ» էպոսն էր ընդգրկված բոլոր դասագրքերում, այնպես էլ «Հայկ և Բել» վիպերգն է ընդգրկված 1-4-րդ դասարանների դասագրքերում: Այս վիպերգը այնքանով է կարևոր, որ դրա միջոցով երեխաները ծանոթանում են հայ ժողովրդի ծագման ու կազմավորման պատմությանը, իմանում են , թե ինչպես է առաջացել մեր ազգը, մեր պետությունը՝ Հայաստանը, մեր լեզուն՝ հայոց լեզուն: Դրան զուգահեռ նաև դաստիարակվում են նաև բարոյապես. փորձելով նմանվել Հայկին՝ նրաք դառնում են քաջ, ազնիվ, արդար և ամենակարևորը՝ հայրենասեր: Իսկ Բելին չնմանվելու համար նրանք չպետք է լինեն վախկոտ, գոռոզ, ամբարտավան:

Ընդհանրացնելով վերը քննարկվածը՝ գալիս ենք հետևյալ եզրակացության. տարրական դասարանների դասագրքերում ընդգրկված են ժողովրդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերը և դրանցից յուրաքանչյուրն էլ իր ուրույն տեղն ունի բարոյական որակների ձևավորման գործընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Ժողովրդական բանահյուսությունը որպես կրտսեր դպրոցականների բարոյական դաստիարակության միջոց» թեման, կատարելով մի շարք հետազոտություններ թեմայի վերաբերյալ, ուսումնասիրելով բազմաթիվ հեղինակների աշխատություններ, ամսագրեր և պարբերականներ, համեմատելով տարբեր հեղինակների կողմից լույս տեսած կրտսեր դպրոցական տարիքի համար նախատեսված դասագրքերը, ինչպես նաև վերլուծելով նպատակային էքսկուրսիաների և երեխաների հետ տարված աշխատանքների արդյունքները՝ հանգել եմ հետևյալ եզրակացության.

1. Ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերն էլ այսօր արդիական են և կիրառելի: Չնայած այն բանին, որ դրանք ստեղծվել են դարեր, հազարամյակներ առաջ, այսօր ևս կիրառվում են նույնպիսի սիրով և ջերմեռանդությամբ, ինչպես ստեղծման առաջին իսկ օրերին: Ժողովրդական բանահյուսությունը մեծ դեր ունի մատաղ սերնդի ուսուցման, դաստիարակության գործընթացում: Սկսած վաղնջական ժամանակաշրջանից, երբ հայ ժողովուրդը դեռևս չուներ գիր, գրականությունը, մատաղ սերունդը դաստիարակվում էր ժողովրդական բանահյուսության միջոցով: Այսօր, երբ մենք ունենք մեր մայրենի լեզուն, մեր հարուստ և բազմաժանր գրականությունը, որոնք համաշխարհային մշակույթային արժեքներ են, մատաղ սերունդը շարունակվում է դաստիարակվել ժողովրդական բանահյուսության միջոցով: Այստեղից հետևության. ժողովրդական բանահյուսությունը կրթել է, կրթում է և դեռևս շարունակելու է կրթել ու դաստիարակել սերունդներ:
2. Կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացում մեծ է մայրենի լեզվի, երգեցողության և այլ առարկայական դասընթացների դերը, քանի որ այդ դասագրքերում ընդգրկված են հեքիաթներ, առակներ, ասացվածքներ, հանելուկներ, շուտասելուկներ, խնդուկներ, կատակերգեր, խաղիկներ, պարերգեր, օրորոցային երգեր աշխատանքային երգեր, որոնք բոլորն էլ բարոյական դաստիարակության լավագույն միջոց են: Բացի դա, նշված ժանրերը լայն հնարավորություն են

ընձեռում զարգացնելու նոր չափորոշչով սահմանված 8 կարողունակությունները:

Այլ դասաժամերի ընթացքում ևս կարելի է օգտվել ժողովրդական բանահյուսությունից՝ զարգացնելով որևէ բարոյական որակ կամ կոմպետենցիա, օրինակ՝ կերպարվեստի ժամին կարելի է երեխաներին հանձնարարել նկարել Սասունցի Դավթին՝ իրենց պատկերացմամբ, կամ տվյալ հեքիաթից որևէ դրվագ՝ իրենց ցանկությամբ: Այս դեպքում շեշտադրում ենք մշակութային կարողունակությունը:

Իմ կարծիքով դասագրքերում անհրաժեշտ է ընգրկել թերապիական նշանակություն ունեցող հեքիաթներ, որոնց միջոցով հնարավոր կլինի երեխաների մեջ հեշտությամբ դաստիարակել ոչ միայն բարոյական բարձր արժեքներ, այլև գտնել երեխաների մեջ եղած հոգեբանական խնդիրները, վեր հանել նրանց վախերն ու անհանգստությունները և փորձել լուծել դրանք:

Այսպիսով, ընդհանրացնելով այս ամենը, գալիս ենք հետևյալ եզրակացության. ժողովրդական բանահյուսությունը մեր ազգի անգին գանձն է, այն իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի ողջ պատմությունը, անցած ուղին, նրա ունեցած հաջողություններն ու անհաջողությունները, այդ իսկ պատճառով այն պետք է պահել աչքի լույս պես և անխաթար կերպով փոխանցել գալիք սերունդներին:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ղ., «Հեքիաթներ», Երևան, 1968
2. Ամիրջանյան, Յու. Ա., Սահակյան Ա. Ս. «Մանկավարժություն», Երևան, 2005
3. Բաբանսկի Յու. Կ., «Մանկավարժություն», 2-րդ հատոր, Երևան, 1989
4. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի լեզու», 3-րդ դասարան, 2021
5. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի լեզու», 4-րդ դասարան, 2021
6. Գրիգորյան Գր., «Հայ ժողովրդական բանահյուսություն», Երևան, Լույս, 1967
7. Հարությունյան Վ., «Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում», Երևան, 1959
8. Յուզբաշյան Յու.Վ., Փահլևանյան Ա.Ա., «Երգեցողություն»,2-րդ դասարան, 2021
9. Յուզբաշյան Յու.Վ., Փահլևանյան Ա.Ա., «Երգեցողություն»,3-րդ դասարան, 2019
10. Յուզբաշյան Յու.Վ., Փահլևանյան Ա.Ա., «Երգեցողություն»,4-րդ դասարան, 2020
11. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 5-6, 2007
12. Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 3-4, 2006
13. Սարգսյան Վ. Ա., «Այբբենարան», 1-ին դասարան, 2021
14. Սարգսյան Վ. Ա., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Մայրենի լեզու», 2-րդ դասարան, 2021
15. Սարգսյան Վ. Ա., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Մայրենի լեզու» 3-րդ դասարան, 2021
16. Սարգսյան Վ. Ա., Գրիգորյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., «Մայրենի լեզու» 4-րդ դասարան, 2021
17. Տեր-Գրիգորյան Լ., Քյուրքչյան Ա., «Մայրենի լեզու», 2-րդ դասարան, 2020
18. Зинкевич- Евстигнеева Т. Д., «Практикум по сказкатерапии», С-П, 2006
19. Вачков И.В., Сказкотерапия, Мос., 2001
20. Вородовская Н., Реан А., «Педагогика», Мос., 2009
21. Подласый И. П., «Педагогика», Мос., 2007
22. Пидкасистый П. И., «Педагогика», Мос., 2009
23. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788&fbclid=IwAR1ZqSPHwJuQGxmMwe2izOp_xXohpqmJ2PZHrXsL7dEQWoXni7xO5TRdJCo

ՀԱՎԵԼՎԱԾ

LOVE